ԱԱհ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թեստավորմանը մասնակցելու համար անհրաժեշտ է

- **ID քարտ**, այն չունենալու դեպքում անձնագիր կամ հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ), իսկ ՀՀ քաղաքացիություն չունեցողները՝ կացության թույլտ
- **Դիպլոմ**
- **Թեստավորմանը մասնակցելու դիմում - հայտ**, որն ընդհանուր է և ավագ և միջին բուժաշխատողների համար
- **Աշխատանք ունենալու դեպքում՝ տեղեկանք աշխատավայրից**
- **Կրեդիտավորված դասընթացների վկայականներ,** որոնք կփաստեն անհրաժեշտ կրեդիտների 70 տոկոսի առկայությունը

ՈՐՏԵՂ ԵՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՐԴՅՈՔ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՌՑԱՆՑ

Թեստավորման փաստաթղթերն ընդունվում են թե՛ առձեռն, թե՛ առցանց

- **Առձեռն տարբերակի դեպքում՝ հարկավոր է ներկայացնել ԱԱհ-ի 101 սենյակ**
- **Առցանց տարբերակով՝ testing@nih.am էլ.հասցեին:**

Այդ դեպքում հայտատուին ուղարկվում է պատասխան՝ հայտն ընդունելու մասին

ՄԻՆՉԵՎ ԵՐԲ ԿԱՐԵԼԻ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Թեստավորմանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերն ընդունվում են ընդհուպ մինչև թեստավորման օրվա նախօրեն, սակայն ցանկալի է դրանք ավելի շուտ ներկայացնել

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

ԱՐԴՅՈ՞Ք ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ՊԵՏՔ Է, ԵԹԵ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆԻ ԿՐԿՆԱԿԻՆ Է ԱՌԿԱ, ԲԱՅՑ ՍՏԱԺ ՉԿԱ ԿԱՄ ԱՎԵԼԻ ՔԻՉ Է, ՔԱՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ 3 ՏԱՐԻՆ

Թեստավորման գլխավոր նպատակը 3 տարվա ստաժ չունեցող կամ երբևէ չաշխատած մասնագետների ինքնակրթությունն է

- Այս դեպքում թեստավորման համար անցողիկ են համարվում պահանջվող կրեդիտների 70%-ը:

Ողջունելի է, եթե մասնագիտական գործունեություն չիրականացրած անհատը, մասնակցելով կրեդիտավորված դասընթացների, կուտակել է պահանջվածից ավելի շատ կրեդիտներ, ինչը սակայն չի ազատում թեստավորման պահանջից

ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐԵԼԻ Է ԳՏՆԵԼ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- Անհրաժեշտ գրականությունը հասանելի է ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի Հանրապետական գիտաբժշկական գրադարանում (Ռուբինյանց 29/3)

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՁԱԽՈՂԵԼՈՒ (ԿՏՐՎԵԼՈՒ) ԴԵՊՔՈՒՄ

Թեստավորումը ձախողելու դեպքում անհանգստանալու կարիք չկա

- Բուժաշխատողները կունենան այն վերահանձնելու հնարավորություն՝ առանց սահմանափակումների

ԻՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԱՆԵԼ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՁԱԽՈՂԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Թեստավորումը ձախողելու դեպքում հարկավոր է անմիջապես վերաքննության դիմում-հայտ ներկայացնել Առողջապահության ազգային ինստիտուտի 101 սենյակ կամ testing@nih.am էլ.հասցեին՝ նշելով վերաքննություն հանձնելու նպատակը

Դիմումից հետո պետք է սպասել թեստավորման նոր օրվա մասին տեղեկատվության

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԿՆ Է

Ո՛չ: Թեստավորման հնարավորություն կտրվի 1-ից ավելի անգամներ

ԱՐԴՅՈ՞Ք ԻՄԱՍՏ ՈՒՆԻ ՖԻԶԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ԱՌԱՋ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑՆԵԼ՝ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՉԿՈՐՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ցանկալի է ֆիզարձակուրդից առաջ մասնակցել թեստավորմանը և ստանալ հավաստագիր՝ հետագա 5 տարիների ընթացքում ցանկացած պահի աշխատանքի վերադառնալու հնարավորություն ունենալու համար

ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ

+374 98 11 78 74
ԱԱԻ-ի Թեստավորման բաժին

+37411 30 00 77
ԱԱԻ-ի Թեժ գիծ